

# 800 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՇՈՒՇԻՆ

*Posted on February 2, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



## ՀԱՅՈՑ ԴԱՏՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱԴԻՄ ԱՐՑԱԽԻ ԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՈՒՅՆԻՍԿ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

### Ստեփան Հասան - Ջալալյան, Զաղաքագետ, Հունվար 2021

13-րդ դարի Արցախի իշխանաց իշխան, թագավոր Հասան-Ջալալ-Դուլան, ցանկանալով կարգավորել թաթար-մոնղոլների հետ հարաբերություններում ծագած որոշակի խնդիրներ 1250-ական թվականների սկզբին իր գլխավորած Արցախի աշխարհիկ եւ հոգեւոր այրերից կազմված պատվիրակությամբ մեկնում է թաթար մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար, մեծ խանի ժամանակավոր պաշտոնակատար Բաթու խանի հետ հանդիպման, որն այդ ժամանակ գտնվում էր Կասպից ծովի ափին՝ Աթլ կամ Վուլգա գետի ափին:

**Բաթու խանը** մեծ պատվով ընդունում է Արցախի թագավորին եւ նրան հանձնում իր՝ Հասան-Ջալալ-Դուլայի հայրենիքներ Չարաբերդը, Ականան եւ Կարկառը, որ նրանից առաջ խլել էին թուրքերն ու վրացիները, հայտնում է 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երեւան, 1982թ., էջ 202):

**Չարաբերդը** հռչակավոր Ջրաբերդն է, որ գտնվում է Տրտու (Թարթառ) գետի եւ նրա վտակ Թրդիի միջեւ սեպածեւ վեր խոյացող ժայռի վրա՝ Երից-Մանկանց վանքից մոտ 3կմ. հարավարեւելք (տե՛ս Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999թ., էջ 284; Բագրատ Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975թ., էջ 120; Lares MkpTARH, WcropsKO архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1989г., с. 52),

**Ականա բերդը** գտնվում է այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի հարավարեւելյան մասում Բալի լեռան ստորոտում, Ականա գետակի ձախ ափին (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, Երեւան, 1982թ., էջ 130),

**Կարկառը** գտնվում է համանուն գետի վրա եւ XV դարի սկզբից սկսած հայտնի է դառնում Շուշի անունով (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լեւոն Խաչիկյան, մաս 1 (1401-1450թթ.), Երեւան, 1955թ., էջ 384):

Այսպիսով՝ պատմական անհերքելի վկայությունները փաստում են, որ Շուշին մոտավորապես 800 տարեկան հայկական քաղաք է: Այս ամենից զատ բոլոր մնացյալը թշնամու շահերը սպասարկող գրչա եւ լեզվամարզանքներ են:

**There are no comments yet.**